



Վ Ճ Ի Ռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

14 հոկտեմբերի 2013թ.

ք. Գյումրի

վարչական գործ թիվ ՎԴ5/0369/05/12

Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանը

նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝

Էդվարդ Նահապետյանի
Մարիցա Ասատրյանի

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Խաչատուր Կիմիկի Գրիգորյանի և Նարինե Ռազմիկի Գրիգորյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի, երրորդ անձ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության, Դանիել և Ալիսա Դանիելյանների՝ օրենքին հակասող վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Յ

Խաչատուր Կիմիկի Գրիգորյանը և Նարինե Ռազմիկի Գրիգորյանը Հայաստանի Հանրապետության վարչական դատարան /Գյումրու նստավայր/ հայցադիմում են ներկայացրել Շիրակի մարզպետարանի, երրորդ անձ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության, Դանիել և Ալիսա Դանիելյանների՝ օրենքին հակասող վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր՝ Էդ.Նահապետյանի 17.07.2012 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ: 02.10.2013 թվականին որոշում է կայացվել վարչական գործը դատաքննության անցնելու մասին: 02.10.2013 թվականին հայցվորների կողմից դատարան է ներկայացվել դիմում հայցից հրաժարվելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին:

Դատարանը գտնում է, որ հայցվորների կողմից ներկայացրած գրավոր դիմում-միջնորդությունը բխում է Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի պահանջներից՝ համաձայն որի Վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը՝ եթե 5/ հայցվորը հրաժարվել է հայցից: Նշված փաստը հիմք է վարչական գործի վարույթը կարճելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ, 111-112-րդ, 115-րդ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով ՀՀ վարչական դատարանը.

Վ Ճ Ո Ե Յ

Խաչատուր Կիմիկի Գրիգորյանի և Նարինե Ռազմիկի Գրիգորյանի հայցն ընդդեմ Շիրակի մարզպետարանի, երրորդ անձ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության, Դանիել և Ալիսա Դանիելյանների՝ օրենքին հակասող վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործի վարույթը կարճել, հայցվորների կողմից հայցից հրաժարվելու պատճառաբանությամբ:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ Վարչական վերաքննիչ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Է.Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ

2013 թվականին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Է.Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

